


նուած և հետզիտէ Արարատ ամսադրիգ մէջ հրատարակուած այնպիսի
արձանագրութիւնների թարգմանութիւններն .

Մ. Ե. Ա.



ԳԵՆՈՒԱՅԻ ՀԱՍՈՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՈՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԹԱԴԱԿԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԺԿ ԵՒ ԺԿ ԴԱՐԵՐՈՒՄ .

(ՎԵՐՅՈՒ ԼԱՆՔԵՐԵՐԵՐ ՀԵՐԱԿՈՎՈՎՈՎ ԱԽԱՆ, ՔՐԱՆԿԵՐԵՐԵՐԵՐ .)

Հազիւ երկու դար անցած էր այն տիսուր նշաններից ի վեր, որոնք այնքան
զանազան ձևերով ծանուցած էին արևմտքի քրիստոնեաներին աշխարհի
մերձակայ վախճանը⁽¹⁾) երբ, աչով ներշնչված աղօթքների փոխանակ,
Սուրբ երկիրը անհաւատների ձեռից խլելու մի ջերմ փափաք յաջորդեց :

Երուսաղէմը ստրկութեան մէջ ընկնելուց յետոյ, իւր նախնի օրերի հա-
րստահարութեան էր հանգիպած և նոր հարստահարիչների զզուելի լուծն
էր կրում : Սրի տակ գերի դարձած և թշուառութեան ծոցից աղերսող
Երուսաղէմը բարձր ձայնով ազատիչներ էր կանչում : Ըուտով արևմտքի
հեռաւոր երկիրներից եկած քրիստոնեայ զօրբերը հասան այս հրաւերին և
պղծված քաղաքի բլուրների ստորոտում երևեցան :

ԱՀԱ ԵՐԿՈՒՄԷ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՅԱՆԿԱՐՃ,

ԱՀԱ ցոյց են տալիս ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ՆՈՔԱ ՄԻՄԵԱՆՑ,

ԱՀԱ ՀԱՂԱՐԱՎՈՐ ՃԱՅՆԵՐ ՄԻԱԳՎԱԾ,

ԱՂՋՈՒՆՈՒՄՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԶԳԱԳՄԱՄԸ⁽²⁾), *

Նորանից քիչ ժամանակ յետոյ բոլոր Ասորիքը նուաճված էր, և
յաղթող Քրանկները տիրումէին այն երկիրների վերայ, որտեղ, հազար
տարի առաջ, Քրիստոս մարդիկներին յայտնած էր իւր աստուածային գո-
յութիւնը :

Արևմտքից եկած պատերազմականներին հետեւ լով, Խտալիայի ծովային
հասարակապետութիւնները խաչակիրների զրօշակին տակ Ասիայի մէջ իւ-
րեանց փառասէր իշխանութիւնը տարածած էին : Քրանկների Ասորիքում

(1) J. de Varagine Chron. Januens. Ch. II. — Conrad Lycosthènes, de Prodig. pag. 226 et suiv.

(2) T. Tasso Gerusal. liv. III, oct. 3.

ունեցած նախկին յաջողութիւններից ի վեր, Թիզա, Գենուա և Անետիկ իւրեանց նաւերը արևելք էին ուղարկած, որքան որ Սուրբ երկիրը ազատելու, նոյնքան ևս իւրեանց ճարտարութիւնը զարգացնելու և իւրեանց վաճառականական յարաբերութիւնները ընդարձակելու նպատակով։ Այս երեք քաղաքներից եկած նաւազարների խաչակիրներին արած ծառայութիւնների շնորհով, Ասորիքի լատին իշխանների կողմից նոցա շնորհված էին եկեղեցիներ, բնակարաններ և վերջապէս քաղաքի թաղեր և նշանաւոր հողեր, որոնց նորա տիրումէին վեհապետ տիտղոսով⁽³⁾)։ Գենուացիները ի միջի այլոց երուսաղէմում, Յուղպէում և Կեսարիայում ազատ հաշուէտներ ունեին, Անթիւ գանձեր ձեռի տակ ունենալով, որոնց միջոցով մայրաքաղաքի վաճառականները անհամար նաւեր էին պատրաստում և շահաւեէտ վաճառականութիւն էին անում, Գենուայի հասարակապետութիւնը շուտով Ասորիքում ահազին աղղեցութիւն ձեռք ձգեց և խաչակիրները ստիպվեցան նորան զիմելու ծովի միւս կողմից ապրանքներ բերելու համար։ Այն շահերը, որ Գենուան քրիստոնեաներին մատուցած այս ծառայութիւններից էր քաղում, իւր շահերին այնքան աւելի օգտաւ էտ էին, որ նա կարող էր տնտեսել իւր մարզիկը և իւր զրամները որոնք անդադար զօրել նաւատորմիղին էին ծառայում, երբ սա տանումէր իւր վաճառները և պաշտպանումէր իւր ազգայինների առուտուրը⁽⁴⁾)։

Մի քանի դարերի ընթացքում Գենուացիները Ասորիքի հետ յարատել յարաբերութիւններ ունեցան, Հասարակապետութեան վաճառականութիւնը և Ճարտարութիւնը այնտեղ շուտ զարգացումն ստացաւ, և հաւանական է որ այս երջանկութեան երկու աղբերները առաւել առատ պիտի լինէին խաչակիրների յաջողութեամբ, եթէ վեցերորդ խաչակիրութիւնից ի վեր Էտալիայի հասարակապետութիւնների մէջ ծագած մրցումները զգալի կերպով յայնկոյս ծովի ճանապարհորդներին և Գենուայի ու Ասորիքի մէջ եղած առևտրական յարաբերութիւնները չթուլցնէին։ Քոլոր ժամանակագիրները մանրամասն պատմած են անողոք նախանձեց, յառաջացած այս աղետաւոր պատերազմները և Անետիկի ու Գենուայի ծաղկած միջոցին այս արիւնուցտ կոիւնների պատճառած գառն հետևանքները, Այս ժամանակից յետոյ գենուացի նաւերը Ասորիքի ափերին շատ քիչ էին յաճախում, և վաճառականները իւրեանց ծովի միւս կողմի մթերանոցներին մի շնչին շահ էին բերում, որովհետեւ այօչափ հեռաւոր մի հարստութեան փոխանակութիւնները նոցա սակաւ էին յարմարում և միայն անուղղակի կերպով էին ծառայում մայրաքաղաքի քաղաքականութեան շահերին։

(3) Muratori: Antiq. Ital, T. II, col. 919.

(4) Guill. de Tyr, Hist. I: XII. 22. XXII. 27 — Dom Brial, disc. prélim. du 19^e Volume des Histor. de la France, pag. 38.

Այս աշխատութեան մէջ Գենուայի արեկլքի հետ ունեցած յարաբերութիւնների ամենահետաքրքիր երեղյմներից մինը պիտի ուսումնասիրենք. Մենք կամենում ենք այս երեկի հասարակապետութեան վաճառականների երկու դարի ընթացքում փոքր Հայաստանի թագաւորութեան հետ ուժեցած վաճառականական յարաբերութիւնների մասին խօսել. Այն աղբիւթները, որոնցից այս յիշատակարանի մէջ պարունակված տեղիկութիւնները քաղած ենք, զգբաղդաբար շատ սակաւաթիւ են, և ծուրինի ու Գենուայի զիւաններում պահպանված մի քանի հրովարտակների և վկայազրերի մէջ են պարունակվում. Անկասկած այս տեղեկութիւնները անբաւական են, եթէ մէկը աչքի առաջ ունենայ որ Գենուացիները 1200 թուից մինչև չորեքտասաններորդ դարի կեսը Հայերի հետ յարաբերութիւններ ունեցան, բայց այն հետաքրքրութիւնը, որ մեզ հասած յիշատակարաններից իւրաքանչիւրը ներկայացնումէ, այնչափ մեծ է, որ առարկայի նշանաւորութիւնը լրացնում բարեբաղդաբար բովանդակութեան հարստութեան պակասորդը.

Արևմտի նաւազար ժողովուրդներին տրված արտօնութիւնները կամ դաշնադրութիւնները բաժաննվում են երկու կարգ. առաջին կարգինը շնորհված էին առաւել նպաստներ ստացող ազգերին, նոցաւ որոնք Հայաստանի թագաւորութեան մէջ մշտական հաստատութիւններ ունեին և կանոնաւոր և յարատե վաճառականութիւն էին անում նոյնտեղ, օրինակ Գենուացիները և Աննետկեցիները, միւս կարգինը այն երկիրների վաճառականներին շնորհված էին, որոնք Հայերի հետ միայն ժամանված յարաբերութիւններ ունեին, օրինակ Պիզացիները Կատալանցիները, Պրովանսացիները և Սիկիլիացիները:

Գենուացիները և Աննետկեցիները, որոնց վաճառականութիւնը փոքր Հայաստանի մէջ շատ յաջողակ և շատ տարածված էր, և որոնք միանգամյն հաշուէտներ, շտեմարաններ, խանութներ, եկեղեցիներ և ուրիշ հաստատուն սեփականութիւններ ունեին, Հայերի հետ յարատե յարաբերութիւններ էին անում, որոնց հարկաւորվեցաւ կանոնի տակ դնել:

Այս է պատճառ որ երեքտասաններորդ դարի առաջին տարիներից Հայաստանի թագաւորները Կոտալիայի երկու մեծ ծովային հասարակապետութիւնների հպատակներին շատ ընդարձակ արտօնութիւններ սկսան շնորհել:

Այս արտօնութիւնները, որոնց առարկաներն էին ոչ միայն մաքսատան սակագրերը, այլ նոյնպէս Հայերի կանոնի հետ համաձայն կամ անհամաձայն առանձին դէպքերում գործադրելի քաղաքական կամ պատժական իրաւունքի կարգադրութիւնները, մեզ եւրոպացիների արեւելքում գործ դրած ամենահին դաշնագրութիւնների օրինակն են՝ ներկայացնում:

Քոլոր այս դաշնագրութիւնները երեսում են որ խմբագրված են Հայկական զիւանատան մէջ գործածված ձեւն համեմատ, բացի 1288 թուին Գենուացիներին և 1333 թուին Աննետկեցիներին շնորհված դաշնագրութիւններից, նոցա մէջ յառաջ բերված դաշնագրները հինգ զիսաւոր

գլուխների մէջ կարող են բռվանդակվել, որոնք են.

1. Մաքսատան սակագրերը և օտարերկեայ վաճառներից պահանջված առևտրական հարկերը,

2. Խորտակման կամ նաւարեկութեան իրաւունքին վերաբերեալ կարգագրութիւններին են վերաբերյում,

3. Խոքա որոնք կտակի կամ անկտակ մեռնողների կարգագրութիւններին են վերաբերյում,

4. Քաղաքական կամ քրէական դատերը,

5. Անձների դրութիւնը.

Մենք այս միշտակարանում այս կարգագրութիւններից խրաբանչիւրը մանրամասն պիտի ուսումնասիրենք:

Երեքտասաններորդ գարի առաջին տարիներումն էր, որ Գենուացիները, որոնք արդէն Ասորիքում հաստատութիւններ ունեին, Կիլիկիայի վերայ իշխող Հայերի հետ յարատե յարաբերութիւններ ունեցան⁽⁵⁾): Քաղաքագիտական վկայագրերը մեջ յայտնապէս ցոյց են տալիս, որ նոյնպէս այս թագաւորութեան մէջ առաջին անգամ՝ արտօնութիւններ ինը զողով և ստացողները նոքա եղան⁽⁶⁾): և միջին դարի ժամանակագրերը, որոնք Խոտիլիայի ժողովուրդների արևելքի հետ ունեցած վաճառականական յաքարերութիւնների մասին մին միւսից յետոյ խօսած են, նոյնպէս այս բանը հաստատում են: Յայտնի է որ՝ այն շրջանում, երբ Հայաստանի և Գենուայի մէջ առաջին տուրեառութիւնները կտրվեցան, Սոխ թագաւորութիւնը նոր էր հիմնվում, Առորէնի սերունդից Ակոն Բ. Տորոս լիոներում և Կիլիկիայի գաշտերում երեք գարերի ընթացքում տիրապետող ցեղապետութեան զլուխը Հռովմի համաձայնութեամբ Գերմանիայի կայսրից թագաւորական թագ ընդունած էր⁽⁷⁾): Խորօնութիւն անմիջապէս յետոյ, Ակոնը հակացաւ որ իւր հայրերի բիւզանդիայի Յայներից յափշտակած երկրում իւր ցեղապետութիւնը աւելի առաջով կերպով հաստատելու համար խաչակիրների պաշտպանութիւնը իւրեան անշրաժեցած էր, և կամնալով իւր դրացիների և դաշնակիցների, Ասորիքի Ֆրանկների արած հաստատութիւններին համաձայն կազմակերպութեամբ իւր թագաւորութիւնը կարգա-

(5) Uberto Foglietta, Hist. Genov. liv. III. pag. 104. — Ogerius Panis, Ann. dans Muratori, Scr. rer. Ital. T. VI pag. 384,

(6) Privil. de Léon II aux Génois dans les Hist. patr. monumenta, liber Iurium, T. I. n° 461.

(7) Michel le Syrien, Chronique ms. en arménien, ms. de la Bibl. Impérialie; anc. fonds arm. n° 90. — Le connéct. Sempad, Chron. Arm. — Guiragos de Gandsaq, Hist. d'Adm. ms. — Tchamitch, Hist. d'Arm. en Arm. T. III. pag. 166. — Baluze, Lettres d' Innocent III, liv. II. pag. 482. — Raynaldi, Ann. Eccles. an. 1199, n° 65.

ւորել, խաչակիրների Ասորիք և Արագրոս մոցրած աւատական ուղղութիւնը ընդունեց⁽⁸⁾). Երբ Լևոն վճռեց այն դժուար խնդիրը որ իւր տէրութիւնը Ասիայում նոր հիմնված քրիստոնեայ տէրութիւններին յարմարեցնելու մասին էր, նա կամցաւ իւրեան Ասորիքի իշխաններին արդեն միացնող կապերը ամրացնել, իւր երկիրները կանչելով տրեմաքից եկած օտարականներին Արևելքում վաճառականութիւն անելու համար, Առանով, մի հարազիտական քաղաքականութիւն գործածելով, Հայաստանի թագաւորը իւր հպատակներին արած օգուտները օտարականների առաջն ևս տարածեց, և վաճառականական փոխանակութիւնները զիւրացնելու, առետրական դործունեութիւնը զարգացնելու, և իւր տէրութեան մէջ հաստատվելու համար եկող արևեմտքի ժողովուրդները խրախուսելու համար կանոններ հաստատեց: Արդարեւ միջոցը ապահով էր ինչպէս շատ սակաւ ժամանակից յետոյ տեսնվեցաւ, Եւրոպայի ամենայն կողմէրից, մանաւանդ Խտալիայից, վաճառականների խմբերը դիմուցին, որոնք Լևոն թագաւորի տուած շահներով հրապուրված Արքիկիայում հաստատվեցան: Երբ այս օտարականների թիւը բազմացաւ, Գենուան, որ Հայաստանին վաճառականների մի մեծ քանակութիւն էր տուած, մի նաւատօրմիդ և մի ծովագետուղարկեց Խութենեան թագաւորութեան զիխաւոր կենդրոն Լայացցօ, Սոի թագաւորի հետ դաշնապրութեան մասին խօսելու համար⁽⁹⁾): Հասարակապետութիւնը պահանջում էր, որ օտարականներին և մանաւանդ Գենուացիներին եղած հովանաւորութիւնը ապահովվի: և վաճառականութիւն անելու իրաւունքը, որ մինչև այն ժամանակ մի միայն մի պարզ թոյլտուութիւն եղած էր, սկզբունք դառնար, վերջապէս թագաւորի ոտորագրութեամբ վաւերացած և իւր կնիքով կնքված պաշտօնական արձանագրութեան մէջ իւրաքանչիւրի իրաւունքները հաստատող դաշնապրութիւններ սահմանվին:

1200 Թուականին պատահեցաւ այս բանը, Հայաստանի թագաւորը հասարակապետութեան պահանջին համաձայնեցաւ, և սկզբում խաղաղութեան դաշն հաստատվեցաւ Լևոն թիւ և գենուացի ծովագետ Դիկողայսու Պօրիայի մէջ, որը հասարակապետութեան կողմից յանձնաբարված էր դաշնապրութեան մասին խօսելու և որոշելու պին հիմերը, որոնց վերոյ պիտի հաստատվէին պայմանները: Մի քանի ժամանակիրներ պահանած են այս բանախօսութեան յիշատակութիւնը, ի միջի այլոց Ռւբեր-

(8) Lettre de S. Nersès à Léon II, dans les œuvres du patr. Grég. Degha, en arménien (Venise, 1838), pag. 203, 281. — Sempad, Chron. — Reinaud, Extr. des hist. arab. des Croisades, pag. 625. — Chartes de priviléges de Léon II aux hospitaliers, dans Paoli, Cod. dipl. T. I et II, passim.

(9) Uberto Foglietta et Ogerio Panis, op. et loc. cit.

առ Գոյլիետտա¹⁰) և Օձերիւս Պանիս¹¹): 1201 թուականի արտօնութիւնը նախընթաց գաշնազրութեան հետևութիւնն էր: Գենուայի կառավարութիւնը Քօղուան-դը-Ռօձերիօին դեսպանութեան պաշտօնով Հայաստան ուղարկեց գաշնազրութեան պայմանները քննելու որի ծրադիրը Նիկողայոս Դորիա ծովագետին էր յանձնած Սիր զիւանատունը, Քօղուան մի և նոյն տարվան մէջ իւր Ճանապարհորդութիւնը կատարեց և Հայերէն լեզուով Խմբագրված արտօնութիւնը բերաւ, որի թարգմանութիւնը անմիջապէս սկսվեցաւ և վերջը սուրբ պալատի նօտար և Յակոբ Քալպիինօի կարգադրութեամբ Գենուայի քաղաքապետ (պօդէստա) Ատտօ Պըլասենտիոսի ձեռով բաղդատվեցաւ¹²):

Տասնուշորս տարի յետոյ Գենուացիները, որոնց ազդեցութիւնը Հայաստանում մեծացած էր և որոնք երկրի մէջ առաւել ընդարձակ արտօնութիւններ կամենումէին ունենալ, նոր ինքնիշխանութիւններ էին պահանջում: Գենուայի դերակոմ (vicomte) Արրիկո (Ի-է-ժ) Գերրարի Սիր ուղարկված էր պատգամաւորների հետ, Լեռն թագաւորից այնքան աւելի ընդարձակ իրաւունքներ ստանալու յանձնարարութեամբ, որ Անսետիկն իւր կողմից պահանջել էր նոյնպիսի նոր իրաւունքներ: Երկրորդ հրովարտակը Խմբագրվեցաւ անմիջապէս և 1215 թուին մարտի 15ին արդէն Գենուա հասած էր, որտեղ Նիկողայոս Պօրտայի աշխատութեամբ լատիներէն թարգմանվեցաւ, և Ատտօ Պլասենտիոսի ձեռով համեմատվեցաւ¹³):

Հասարակապետութիւնը զիւտէր հնարագիտութեամբ օգուտ քաղել Լեռն Ք. ի իրեան նկատմամբ ցոյց տուած բարեկամութենից, Երկար ժամանակից ի վեր Անտիոքի իշխանութիւնը, որի ժառանգութիւնը Տրիպոլի Այայմունդ կոմսի և Հայաստանի թագաւորի քեռորդի Ռայմունդ Ռուբէնի վէճի առարկայ գարձած էր, իւր նաւահանգիստները Գենուացիների առաջ բացած էր: Նոքա շահվեցան Լեռն Քի իւր քեռորդի Ռուբէնի վերայ ունեցած ազդեցութենից, Երկար ժամանակից յետոյ իւր մայրաքաղաքը մտնող երիտասարդ կոմսից արտօնութիւններ խնդիրն համար: Լեռն Քը այս բանախօսութեան մէջ մտաւ և իւր հոգացողութիւններով և իւր ներկայութեամբ մի դաշնազրութիւն ստորագրվեցաւ փետրվարի մէջ 1216 թուին, և Գենուացիներին շատ ընդարձակ արտօնութիւններ տրվեցան¹⁴):

Տէ երեսում որ Լեռն Քի արած դաշնազրութիւնները իւր յաջորդ և իւր դուստր Զարէլի ամուսինն Հեթում Աի Թագաւորութեան ժամանակ յօդուտ Գենուացիների փոփոխված լինին: Անթազրելին այս է միայն, որ նոքա առանց փոփոխութեան հաստատվել կարողացան, որովհետեւ մեր յիշած

(10) Hist. Gen., III. pag. 104.

(11) Ann. Gen., dans Muratori, Script. rer. Ital., T. VI. pag. 384.

(12) Lib. Iurium, T. I. n°. 461 dans les Hist. patr. monumenta.

(13) Lib. Iurium, T. I. n°. 514.

(14) Lib. Iurium, T. I. n°. 516.

թագաւորութեան ժամանակից որ և իցէ նոր հրովարտակ մեզ հասած չէ, Հեթումի յաջորդ Լևոն Գի ժամանակ Գենուացիները նոր արտօնութիւնների պահանջեցին։ 1288 թուին Քընուա Զաքարիա Հայաստան եկաւ և իւր հայրենակիցների համար նոր արտօնութիւններ պահանջեց։ Արևուտեալ որ Գենուան այս գաշնագրութիւնը հաստատելու մէջ զինաւորապէս մաքւ սերի սակագրերի հարցովն էր պարապում։ որովհետեւ հրովարտակի բովանդակութեան մէջ միայն վաճառներ մոցնելու և հանելու իրաւունքի հարկի հաստատութեան մասին հարց կայ⁽¹⁵⁾)։

Կարելի է կարծել որ այս արքունի հրովարտակը, ինչպէս որ այն մեզ հասած է, ծրագիր էր միայն, որի խմբագրութիւնը ամենից առաջ Գենուացիների իշխանութեան տակ պիտի լինէր, որովհետեւ բովանդակութեամբ Հայաստանի թագաւորների թէ Գենուացիներին և թէ Աննետկեցիներին տուածուրիշ արտօնութիւններից բոլորովին զանազանվում։ Ար արդարև մէր յիշած հրովարտակը միմիայն ծրագիր էր, և որին զիռ ևս վերջնական ստորագրութիւն չէին զրած ապացոյցն այն է, որ հետեւել տարին իւր կառավարութեան նոր հրահանգներ բերող Քընուա Զաքարիան կրկին անգամ Սիսեկաւ և խնդրեց, որ գաշնաղրութեան ուրիշ սպայմաններ աւելացվին։ Քայց Լևոն Գըն նոր վախճանած էր, և իւր որդի Հեթում Ք. գահի վերայ բարձրացած Ասֆֆարօ⁽¹⁶⁾)։ որ Քընուա Զաքարիայի պահանջներն է քննում, չէ յայտնում մեզ ստացաւ նա նոր թագաւորից ինչ որ խնդրում էր թէ ոչ և ամենայն ինչ մեզ կարծել է տալիս որ Հեթում Քի և իւր եղբայրների թագաւորութիւնների ժամանակ տեղի ունեցած քաղաքական խառնակութիւնները Հայաստանի թագաւորներին չթցյլատրեցին եռանդով Գենուական հասարակապետութեան գործերով զրագվելու։ Արդարև, երեքտասաներորդ գարի վիրջին տարիներից ի վեր, Գենուան այլ ևս նոր արտօնութիւններ չպահանջեց, և իւր յառաջադրոյն ստացած առաւելութիւններից օգուտ քարելով բաւականացաւ։ 1288 թուի արքունի հրովարտակից յետոյ այլ ևս յօդուած Գենուացիների նոր արտօնութիւններ չեն գտնվում։ և սակայն Պետոլուտին որ չորեքտասաններորդ գարի կէսումն էր զրում⁽¹⁷⁾)։ Հաստատապէս ասում է, որ Լևոն Նի իշխանութեան տակ Գենուացիները Հայաստանում հարկից աղաս էին, որ ցոյց է տալիս թէ այս իշխանի և թէ նոյն իսկ իւր նախորդ Օշինի թագաւորութեան ժամանակ Հայաստանի մաքսատունը Գենուացի վաճառականներին յառաջ հատուցած հարկից աղասած էր։

(15) Notices et extr. des. mss. T. pag. 97.

(16) Ann. Gen., liv. X. col. 596, du T. VI, des Rer. ital. script. de Murator. — Canale, Storia di Genova, T. IV. fasc. III. pag 361.

(17) Pratica della mercatura dans la Decima de Pagnini, T. III. ch. XI. pag. 44—48.

Մենք ամենայն իրաւունք ունինք կարծելու որ Գենուացիները այս առիթով մի հրովարտակ ստացան, որովհետեւ Վենետիկիցիները և Սիկիլիացիները արդէն ստացել էին⁽¹⁸⁾), բայց այս վկայագիրը եթէ կայ ևս, մեր խուզարկութիւններին հանդիպած չէ:

Մեր բացատրութեան համեմատ Հայաստանի թագաւորների կողմից Գենուացիներին տրված արտօնութիւնները երեք են, այսինքն՝ արքունի հրովարտակները կամ Լեռն Քի ոսկէ հրովարտակը 1201 և 1215 թուականներին և 1288 թուին Լեռն Գրնուա Զաքարիային տուածը, որին Գենուայի հասարակապետութիւնը Կաֆֆարօի յիշած պայմանները կամենում էր աւելացնել, և որուք սկզբնական նախադի մէջ բաց էին թողնըվոծ:

Մենք այժմ Գենուացիներին տրված արտօնութիւնների բնագրում պարունակված զանազան հարցերը պիտի ուսումնասիրենք և ամենից առաջ մենք նկատել պիտի առնք, որ նոքա խրեանց հիմերով Վենետիկիցիներին տրված արքունի հրովարտակների մէջ յիշվածներին հետ նոյնանման են⁽¹⁹⁾): Երկու հասարակապետութիւնների հզարակները միմեանց վերաբերմամբ Հայերի առաջ միւնոյն զիրք ունեին:

1101 և 1215 թուականների երկու ոսկէ հրովարտակների մէջ սկզբում սահմանված է, որ Գենուացիները թագաւորութեան մէջ շրջելու, նաւահանգիստները մտնելու և զուրս գալու, ծախելու և գնելու իրաւունք պիտի ունենան առանց հարկեր հասուցանելու: Բայց որովհետեւ առաջին հրովարտակում ամենների խնդիր չէր եղած թագաւորութեան աւատական պարունների կալուածների մէջ գտնված անցքերի մասին, որտեղ մասնաւոր մաքսեր էին սահմանված: 1215 թուականի հրովարտակի մէջ առանձնապես ասված է, որ Գենուացիները պէտքէ համաձայնին սովորութիւններին, հասուցանելով անցքի հարկերը Տիրերիայի բարօն Ոթոնի, Գաստիմի տէր Աղամի, Կորեկոսի տէր Վահրամի, Կատանի տէր Լեռնի երկիրների մէջ, և ճիշտն (Պիրամոս) գետի անցքում մինչեւ որ այս զանազան վիճակները տէրութեան վերադառնային, որպիսի զէպքում թագաւորը անցքի իրաւունքի հարկերից խոստանումէ հրաժարվել միմիայն յօդուտ Գենուացիների: Սորանից շատ յետոյ էր (1289): որ Գենուացիները խնդրումէին այն հարկերի բարձումն, որը արքունի մաքսատները պահանջումէին սահմաններից անցնելիս պիտի ապրանքների համար, որը հասարակապետութեան հպատակները Հայաստանի զրացի մահմատական երկիրներ էին տեղափոխում, օրինակ Եկոնիայի ոուլմանի և Կապագովկիայի թիւքմէն էմիրների երկիրները:

(18) Archives de Venise, Patti, III. f. 49.—Basmâvèp, 1847, pag. 92—94.

(19) Archives de Venise, Patti I. 167., ll. 6. 41. III. 48. 49. et Commémor. l. 115.

1215 թուականի հրովարտակում Լևոն Բ. բոլոր իւր թագաւորութեան ընդարձակութեան մէջ Գենուացիների անձնաւորութիւններին և նոցա ստացուածքին առանձին պաշտպանութիւն է շնորհում և միայն հրաժարվութէ յօդուտ նոցա խորտակված նաւի մացորդների հարկից որը ծանրանում էր այն բոլոր նաւերի վերայ, որոնց անտէր գործը իւր հողերի ծովեղքի մէջ խրվումէին:

Մի և նոյն հրովարտակը սահմանումէ նոյնակա, որ Գենուացիների մէջ ծագած անհամաձայնութիւնները գենուական դատարանով պիտի դատվին և Գենուացիների և նոցա հասարակութեան համար օտարականների մէջ եղած կոխները թագաւորի բարձրագոյն զրանը պիտի դատվին (regalis curia):

Այնուհետև ասված է մի և նոյն հրովարտակում, որ եթէ Գենուացին մի շարագործի ձեռով կողոպտվի, թագաւորը իւր ստացուածքը կամ կողոպտված ապրանքը նորան պիտի դարձնէ, առանց պահանջելու ոյն հարկերը, որոնք խուզարկութեան (tserca) հարկեր անունով այսպիսի հանդամանքում արգունի գանձատան սպաների ձեռով պիտի ժողովվէին:

Կւրեանց վէճերը դատելու համար Գենուացիներին մի դատարան յատկացնելով հանդերձ, թագաւորը երկրորդ ոսկէ հրովարտակի մէջ իւրեան վերապահած էր զատելու իրաւունքը իւր բարձրագոյն զրանը գողութեան և մահի գէպքերը, որոնք առաջին հրովարտակի մէջ նշանակված չէին:

Ժառանգութեան իրաւունքի վերաբերեալ կարգադրութիւնները երեւում են միայն 1288 թուի հրովարտակի մէջ: Այնուղ ասված է, որ եթէ մի Գենուացի վախճանի առանց կտակի, իւր ստացուածքը Գենուացիներին պիտի յանձնվի, եթէ Գենուացի ամուսնանայ հայ կնոջ հետ և անձնական ստացուածքներ ունենալով առանց կտակի կամ առանց ժառանգի մեռնէ, իւր ստացուածքները հասարակապետութեան պիտի պատկանեն, և իւր կնոջ իրաւունքներով ստացած ժառանգութիւնները տէրութեան պիտի վերաբառնան:

Թէպէտ և ասված է յատկապէս, որ Գենուացիները աղատ են ապրանք, ներ մոցնելու և հանելու հարկից, և թէ այս գործը Պեղոլօտաթիի կողմից հաստատված է¹⁰), սակայն երեւում որ այս փոսքը պէտք չէ տառ առ տառ հասկանալ: Օրինակ ակներև է որ Գենուացիները մաքսատան որոշեալ հարկեր եին հատուցանում, որոնք ամբողջապէս նշանակված են 1288 թուականի հրովարտակի մէջ: Այս հակասութիւնը չպիտի բացատրվէր, եթէ որ չընդունվէր իրեւ սկզբունքը, որ Հայաստանում երկու տեսակ հարկեր կային, որոշ սահմանված հարկեր և համեմատական հարկեր կամ ad valorem (ըստ արժողութեան): Առաջինները նոքա էին, որը առանց բացառութեան այն ժողովուրդները պիտի հատուցանէին, որոնք բարձրագոյն իշխանութենից

(20) Pratica della mercatura, § 3, du chap. intitulé Armenia.

մոլորի կատարեալ աղասառը թիւն չէին ստացած և օրոնք մէկից մինչև շորս
կարող էին բարձրանալ, մինչդեռ երկրորդ տեսակ հարկերը բոլոր աղգերի
համար պարտաւորական էին, մի և նոյն չափով:

(Կ Հ Ա Ր Ա Տ Ա Մ Ս Ո Ւ Գ Ի Ր :)

Ճ Ե Խ Ե Ա Ր Ա Տ Ա Մ Ս Ո Ւ Գ Ի Ր .

Յ Ի Ս Ո Ւ Բ Ի Շ Ն Ո Ւ Ն Դ :

Նա ծնվեցաւ ոչ մարմարում, և ոչ ոսկում,
Նորա շուրջ չէր տօնախմբում ճոխ արքունիք,
Աստուածներին պարարտ զոհիր չէին զինվում,
Եւ չէր թնդում վարձկանների խումբ երգեցիկ,
Բայց երկնքի և երկրի մէջ խաղաղութիւն
Հանդիսաբար կատարվեցաւ այն ժամանակ,
Եւ երկնքում ողիների ձայներգութիւն
Հընչումեր, երբ ծագեց մեզ լսյու նոր արեգակ . . .
Այն օրից նա վառված է միշտ և չէ հանգչում,
Թէև թխապոտ տմպով երրեմն նա ծածկվումէ,
Բայց այն ամփերն կեանքի մրրիկն է հեռացնում,
Եւ շարունակ առաջվան պէս նա փոյլումէ,
Աստուածային ծշմարտութեան է նա վառ կրակ,
Եւ լաւագոյն հոգիների սուրբ ցանկութիւն,
Ազագայի մշտածաւալ է նա զիօշակ,
Երջանկութեան չժառաամօղ ծաղիկ սիրուն,
Ուրիշն եղիր մեզ ճանապարհ ցոյց տուօղ աստղիկ,
Ենչպէս որ մոդ—արքաներին երրեմն էիր,
Եւ տար մեզ զու զէպ ազնիւ զործ և զեղեցիկ.
Տղիտութեան, շարութեան դէմ մեզ միշտ վառիր:

Ի Հ Յ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Տ Ա Մ Ս Ո Ւ Ն Դ :

Ա Զ Դ Ա Ց Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն :

* Արարատի * ներկայ տեսրակը ուշացաւ, որի պատճառը խմբագրօղի
առժամանակեայ բացակայութիւնն էր, և որ կյուսանք ներեն ընթերցօղը
ները, Խմբագրութիւնս ջանալու է, Ա. Ե. Հ. Հայրապետի ցանկութեան համե-
մատ, ամսագիրը իւր ժամանակին հրատարակել:

Ա. Ե. Հ. Կաթողիկոսի հրամանով Խորէն Վ. Ստեփանէն գնացած էր Թիֆ-
լիս կարեոր պաշտօնով — յօդուտ Գ. Ճեմարանի ննջարանի շինութեան
նուերներ հանդանակելու, Աստուծու ողորմութեամբ, Ա. Ե. Հ. Հայրապետի
սուրբ օրհնութեամբ և աղօթքով, Թիֆլիսի պատուական և հայրենասէր
քաղաքացիների Պ. Ա. Պորդանեանի, Պ. Յ. Զիթախանի, Պ. Ա. Ման-